ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

10.12.2018թ. կնքված N ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/19-1 ծածկագրով պետական գնման պայմանագրի

ք.Երևան **«25» Դեկտեմբեր 2018թ.**

ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Գ. Մխեյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ)՝ մի կողմից, և «ԳՈՐԾ-555» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Ադամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին /այսուհետ՝ Կողմեր/, հիմք ընդունելով 10.12.2018թ. կնքված N ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/19-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետը, ղեկավարվելով Պայմանագիրն ի կատար ածելու պահանջով, նկատի ունենալով, որ Պայմանագրի կատարումը տեղափոխվում է պայմանագիրը կնքվելու տարվան հաջորդող բյուջետային տարի (մինչև 17.01.2019թ. ներառյալ), համաձայնեցին Պայմանագրում լրացնել նոր՝ 3.2 կետ, հետևյալ բովանդակությամբ. «Պայմանագրի գնից՝ մինչև 13348200 (տասներեք միլիոն երեք հարյուր քառասունութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ: Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը պատվիրատուին է ներկայացնում նաև 100% կանխավճարի ապահովում, բանկային երաշխիքի ձևով»:

2 Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերեն լեզվով՝ կնքված երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ	«ԳՈՐԾ-555» ՓԲԸ
ք. Երևան, Բաղրամյան պող.19	Հասցե՝ ք. Երևան, Սիլիկյան 10
ՀՎՀՀ 00008519	ՀԷԲ ԲԲԸ, Շահումյան մ/ճ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	163028105837
Հ/Հ 900011020147	01204386
ՀՀ ԱԺ աշխատակազմի	Տնօրեն՝
ղեկավարի առաջին տեղակալ	Սարդար Ադամյան
Գ. Մխեյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ Ազգային ժողովը ստորև ներկայացնում է իր կարիքների համար զանազան կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/19» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված N ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/19-1 պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 25-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1՝	Պայմանագրի կատարումը տեղափոխվում է պայմանագիրը կնքվելու տարվան հաջորդող բյուջետային տարի:
Փոփոխության նկարագրություն՝	Պայմանագրում լրացվել է նոր՝ 3.2 կետ «Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը պատվիրատուին է ներկայացնում նաև 100% կանխավճարի ապահովում, բանկային երաշխիքի ձևով»:
Փոփոխության հիմնավորում՝	ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետ:

Պատվիրատու՝ ՀՀ Ազգային ժողով